



Զապել Եսայան

Քողը

Անառուան առաջին գեղեցիկ օրերն էին. գարնան յամեցող գովութենէն կարծես ձանձրացած բնութիւնը մէկ քանի օրուան մէջ աճապարեր էր իր բոլոր շքեղութիւնը ստանալու: Չերմ եւ պայծառ արեւ մը կը շողշողար կապոյտ երկնակամարին վրայ եւ անոր ճառագայթներուն փայփայանքին ներքեւ Մարմարայի կուրծքը խտղըտալով կը փալփիւր: Ոսկեղէն անձրեւ մը կը տեղար ամէն կողմ եւ մօտակայ սեւ նոճիներու գագաթներն իսկ արագ եւ բեկբեկ կայծկլտումներ կը փոխանակէին իրարու լուսաւոր եւ ակնախտիղ մշուշի մը մէջ Սթամպոլի սիլուէդը անօսրանալով եւ տեսիլքի մը պէս խուսափելով կ'անէանար հեռաւորութեան մէջ:

Շոգենաւր ճերմակ փրփուրներու ակօսի մը մէջէն յառաջանալով կը մօտիկանար ասիական ասփունքին եւ Սալաճաքի արուարձանը ամբողջովին կը պարզուէր արդէն աչքի առաջք՝ իր մանուածապատ եւ անձուկ շաւիղներով եւ փտած փայտի գոյն ու կարմիր կղմինտրներով ծածկուած տուններով, որոնք աստիճանաբար կը դիզուէին բլրակի մը կողին վրայ:

Ալի Հասան պէյ, գեղեցիկ եւ բարեկազմ զինուորական սպայ մը, ոտքի ելաւ եւ կանգնած սպասեց որ շոգենաւր հանդպի նաւամատոյցին: Իր թխորակ եւ խրոխտ դէմքը բարութեան եւ քաղցրութեան հակամէտ կը թուէր՝ այն շեշտուող գերութեան պատճառաւ, որ կարծես լեցնելով դէմքին գիծերը, կորսնցնել կուտար անոնց խստութիւնը. իր աչքերը թեթեւ մը կարմրած կոպերու մէջտեղէն երագուն անստուգութիւն մը ունէին: Լաւ սնած, լաւ հագուած եւ ամէն կարգի անմիջական հոգերէ գերծ մարդու անփութութիւն եւ ինքնավստահութիւն մը՝ իրեն հպարտ

կեցուսացք մը կուտար: Հագեր էր ձիաոր գորաց յատուկ համազգեստը եւ մինչեւ ծունկերը կը կրէր դեղին կաշեայ մոյկեր:

Աս ի՛նչ գուգադիպութիւն, պէ՛յս, ձայնեց մէկը որ վարի խուցերէն դէպ ի շոգենաւին կամրջակը կը բարձրանար: Ի՞նչ բարեպատեհ առիթի կը պարտինք ձեր մեծութեան մեր խոնարհ թաղերը գալու դիտաւորութիւնը:

Խօսողը աստիճանակից սպայ մըն էր, նիհար, ջղուտ եւ արաբացիի մը նման թուխ. իր պղնձագոյն դէմքին վրայ պեխերը ձիւնի պէս ճերմկեր էին. բայց աչքերը պահած էին արծիւի սրատեսութիւն մը եւ հուրք մը:

Ալի Հասան իր ընկեարկցին ձայնը լսելով՝ ետեւ դարձաւ, մեծ սելամ մը տուաւ եւ փոխարինելով անոր քաղաքավարական չափազանցեալ բացատրութիւնները, խօսքերու եւ ձեւակերպութիւններու ապշեցուցիչ արագութեան եւ դիւրութեան մը մէջ, յայտնեց թէ Սալաճաք եկած էր՝ երթալ տեսնելու համար իրենց վաղեմի եւ ծերուկ աշխատատրներէն մէկը որ անդամալուծուած էր եւ անկողնի կը ծառայէր:

Ո՞րն է, պէ՛յս... թերեւս ես ալ յիշեմ:

Իպրահիմը. ձեր մեծութիւնը գիտէ թէ անոր քոյրը իմ դայեակս եղած է եւ ինքն իսկ իմ հօրս հետ պատերազմի դաշտին վրայ գտնուելով լուսադբար եղած են. այս այն Իպրահիմն է որուն շահաբեր գործ մը առաջարկուելով Բումէլի սահմանագլխին վրայ, մերժեց...

Մերժե՞ց...

Այո՛, իր ճերմակ մազերով գլուխը գետին խոնարհեցնելով նախարարին ոտքերուն փարեցաւ եւ արտասուագին աչքերով ըսաւ. «Ես քու ստրուկդ եմ, եւ քու հրամաններուդ ենթակայ, բայց Բումէլիի սահմանագլխին վրայ, ո՛վ իմ տէրս, միայն բանակի մէջ եւ իբր գինուոր երթալու երդում ըրած եմ»:

Խորհրդաւոր եւ անխօս դատնութիւն մը երեւցաւ երկու սպաներու դիմագծերուն վրայ. ծերունի եւ ստորադաս Իպրահիմի հայրենասիրութիւնը զիրենք դղրդեց խոր, բայց շփոթ զգացումով մը. երկուքն ալ թերեւս ներքնապէս կը զգային որ

իրենք ծերունի գինուորին որ պարզ պայտար մը մնացեր էր գորանոցին մէջ փափկանկատութիւնը չպիտի ունենային եթէ պաշտօնի կամ աստիճանի բարձրացումով գիրենք դրկէին Բումէլիի սահմանագլխին վրայ: Տեսականօրէն երկուքն ալ ունէին դառն կսկիծ, երբ անդրադառնային այդ մտածումին, բայց կեանքը իր բարդ եւ տիրական պահանջները ունի եւ իրենց հայրենասիրական եռանդը կը կորսուէր տարտամ եւ բազմատեսակ ախորժակներու զգայնութեան մէջ:

Երկու պէյգատէները արագութեամբ մտածեցին այս բաներուն վրայ՝ երբ շոգենաւը արդէն հանդպած էր նաւամատոյց. ցանցառ ճամբորդներուն մէջէն լայն տեղ բանալով եւ մէջքերնէն վար կախուած սուրերը շխշխացնելով գետնին վրայ, յառաջացան եւ մտան փոշոտ ու նեղ փողոցներու մէջ:

Ալի Հասան իր ձեռքը բռնած ծրարը ցուցնելով՝ ընկերոջը ըսաւ.

Նարինջ պիտի տանիմ հիւանդին:

Ընկերանամ ձեզի, եթէ կ'ուզէք, բայց ես ալ բան մը տանիմ Բ-պրահիմին:

Անուշեղէնը կը սիրէ ծերուկը, ըսաւ Ալի Հասան, եկո՛ւր բակլավա ալ առնենք իրեն համար:

Սպաները շեղեցան իրենց ճամբէն եւ մտան շուկային մէջ. խիտ եւ մթին կրպակներ իրարու քով տարուած էին բայց անոնք պարսպ էին, որովհետեւ խանութպանները իրենց բոլոր ապրանքները դուրս հանած եւ գետեղած էին կրպակներուն դրանը առաջք: Նոր հասած ձուկերու դէզէ մը ծովային բարկ հոտ մը կը բարձրանար, անդին՝ կարմիր եւ դեղին գիծերով շերտաւորուած դենջակը մէջքերնուն, հուժկու եւ ըմբիշի երեւոյթով խոհարարաներ, բացօթեայ վառարաններու վրայ տեսակ տեսակ խմորեղէններ կը պատրաստէին:

Անանուն եւ գարշահոտ արտաշնչում մը կը տարածուէր ամէն կողմ. հողէն նոր ելած բանջարեղէններու աղբային խոնաւ հոտը, օրեր է ի վեր մնացած եւ շարունակ ջրուած կանանչեղէններու վերահաս փտութեան հետ՝ կը խառնուէր ձուկի եւ տապկուած խմորեղէնի հոտերուն: Բայց այս ամէնուն վրայ շլացուցիչ

արեր կը ծագէր, կը լուսատրէր եւ իր ճառագայթներու ոսկեղէն խաղովը կ'այլափոխէր ամէն ինչ. կարմիր եւ դեղին շերտերով դենջակները իրենց երանգներուն ամէնէն ուժգին արտացոլումը ունէին եւ շուկային մէջտեղը մորացած ցեխի ճահիճը դանդաղօրէն շոգիանալով, կապտորակ եւ գետնին վրայ ծածանող մշուշի մը կը փոխուէր՝ ուրկէ, նոյնիսկ երբեմն կը սլանային ոսկեգօծ ճաճանչներ:

Ալի Հասան եւ Ատիլ պէյերը բեռնատրուած պտուղներով եւ անուշեղէններով՝ մտան թաղերուն մէջ: Երկար ատեն քալեցին անձայն եւ ամայի ուղիներէ, որոնց երկու կողմը փլատակի վիճակին վերածուած հին տուներ իրարու կը կրթնէին եւ կարծես գօրատր հովէ մը տարուիլ, քշուելու վտանքին ենթարկուած էին: Վանդակապատ պատուհաններու ետեւէն ո՛չ մէկ ձայն, ուրախութեան թէ տխրութեան, չէր լսուէր: Ո՛չ մէկ մանկական աղաղակ չէր բարձրանար այդ պահուն՝ հնամենի այդ տուներէն. որոնց ամբողջութիւնը ատերակի, քանդումներու եւ անասելի աղէտի մը մխրեցնող զգացումը կը ներշնչէր:

Փողոցի փոշիէն գորշացած տերեւներով ծառեր, վտիտ եւ չոր ոստերով կը ցցուէին երբեմն տուներու ետեւէն եւ կ'աւելցնէին այս ատերածութեան տպատրութիւնը:

Հակառակ շողշողուն արեւին, անոր ճառագայթները չէին սպրդեր այս խոնաւ եւ տղմուտ փողոցներուն մէջ ուր երբեմն երեւցող պարտէզներու փլփլած քարաշէն պատերուն վրայ, ստուար մամուռ մը թաւշային եւ հում կանանչով կը սողար ամէնուրեք:

Բայց երբ երկու զինուորականները ելան ցից եւ կարճ զառիվերէ մը, տուները հետզհետէ ցանցառցան, ընդարձակ եւ արեւոտ պարտէզներ յայտնուեցաւ իրենց նայուածքին եւ նոյն իսկ ասդին անդին վաղահաս կլիսիներու մանիշակագոյն եւ քաղցր ողկոյզներ, որոնք մագլցելով տուներն ի վեր՝ գանոնք կը հագուեցնէին իրենց փարթամ եւ գարնանային պատմութեանով:

Բարձունքին վրայ երկուքն ալ կեցան եւ իրենց առնական կուրծքերը ցցելով՝ լայն մը շնչեցին, իրենց աչքերը պտտցնելով Մարմարայի ընդարձակ եւ փալփլուն տարածութենէն մինչեւ Վոսփորի մշուշոտ եւ ոլորապտոյտ գիծը:

Մինչեւ այդ միջոցին, երկու ընկերները կը խօսակցէին սովորական եւ ընթացիկ բաներու վրայ, իրարու կը հաղորդէին իրենց զօրանոցի յատուկ բամբասանքներ, յառաջացումներ, տեղափոխութիւններ եւայլն: Կը խօսէին նաեւ քաղաքական խնդիրներու մասին, զգուշանալաով վճռական կարծիք մը յայտնելէ եւ իրարմէ սպասելով որոշ ուղղութիւն մը դէպքերու եւ դէմքերու վրայ, ինչ որ առանց եզրակացութեան կը յանգեցնելու՝ կ'երկարաձգէր իրենց խօսակցութիւնը եւ կը թուցնէր անոր շահեկանութիւնը: Բայց երբ բարձունքին վրայ եկան, Ալի Հասան ընդհատեց իր խօսքը, շուրջը նայեցաւ եւ գոչեց խանդաղատանքով.

Ամա՛ն Ալլա՛հ, ինչպէս գեղեցիկ է:

Լայն եւ ամառնային շունչ մը կը մտնար իր էութեան մէջ կը բարձրացնէր իր տրամադրութիւնները. յուզուած զգայնութիւն մը թռիչք կուտար իր հոգւոյն: Դողդոջուն եւ արեգնաւէտ բանաստեղծականութիւն մը թրթռաց իր մէջ երկարատեւ եւ հեծեծագին երգի մը պէս, ու քաղցր տխրութիւն մը պատեց զինքը: Մահուան եւ սիրոյ տարտամ եւ աննպատակ իղձեր գիրար խաչածեւեցին իր տպաւորութեանց մէջ եւ ինքզինքը տրամադիր զգաց դուրպան ըլլալու ո եւ է ջախջախիչ գեղեցկութեան եւ մեծութեան համար...

Ատիլ պէյ իր սրատես արծիւի աչքերը սեւեռած Սթամպուլի պարիսպներուն կը մտածէր բոլորովին ուրիշ բաներու վրայ եւ երկուքն ալ լանկարծ սթափեցան եւ շարունակեցին ճամբանին:

Թաղերէն հեռու, պարտէզներու մէջ կորսուած էր Իպրահիմ աղային տնակը: Բարակ ձողիկներէ կազմուած ցանկապատ մը կը յայտնէր իր համեստ կալուածին սահմանը. ոչ ոք չէր երեւնար այդ միջոցին, բայց հեռուէն Գուրան կարդացող պառաւ կնոջ մը խոպոտ եւ ծեքծեքուն ձայնը կուգար, ձայն մը որ պահած էր սակայն իր երբեմնի սրտառուչ գեղեցկութեան հետքերը:

Երկու սպաները բացին ցանկապատին դռնակը, մտան հերկուած եւ պարարտ արտերու մէջ եւ ուղղուեցան դէպի տնակը: Յանկարծ վարդագոյն էնթարի մը երեւցաւ իրենց աչքին. երիտասարդ աղջկան մը ճկուն եւ դիւրաթեք հասակը կը ծածկէր անիկա, որ ոստոստող քայլերով, չհերկուած դաշտի մը դալարիւններուն մէջէն բանջար կը հաւաքէր:

Չէին տեսնար անոր դէմքը եւ իրարու հետ չէին խօսէր, իրենց ձայնովը գայն չխրտչեցնելու համար: Մթնոլորտը լեցուն էր բուրումնաւէտ բոյսերու գլխիչ հոտով եւ պատաւին ձայնը մաշած նուազարանի մը բեկբեկ թրթռացումով կը շարունակէր երգել: Շեշտագին սարսուռ մը կը դողար ամէն կողմ եւ գինուորականները զգուշութեամբ կը յառաջանային, բայց իրենց սուրերուն աղմուկը հասաւ աղջկան ու անհկա ետեւ դարձաւ երբ շատ մօտիկցած էին արդէն իրեն: Խպնելով՝ գլուխը բաց երեւնալուն համար անձանօթ երիտասարդներու, անհկա հապճեպ շարժումով իր քօղը վեցրուց ուսերուն վրայէն, գլուխը ծածկեց եւ եղնիկի մը պէս խուսափելով իրենցմէ, հեռացաւ գնաց:

Բայց երկու ընկերները տեսեր էին անոր ժպտուն եւ ճառագայթող, դէմքը ականջներէն կախուած արծաթէ խոշոր օղակներով շրջանակուած, տեսեր էին անոր պատանեկան բոցավառ եւ հեզնոտ նայուածքը եւ իրարու նայեցան բարեցակամութեամբ ժպտելով:

Քանի մը վայրկեանէ ի վեր երկու գինուորականները նստեր էին Իպրահիմին քով պզտիկ աթոռակներուն վրայ եւ կը խօսակցէին բարեկամաբար: Վանդակապատ պատուհաններէն լոյս մաղուեով կը ծածանէր եւ կէտկիտուելով կը խաղար ճերմակ տախտակամածին վրայ. ծայրայեղ մաքրութիւն եւ պարզութիւն կը տիրէր սենեակին մէջ. գետինը փռուած անկողնին մէջ. Իպրահիմ կը հանգչէր կզկտելով իր յօդացաւէ կարկամած սրունքները՝ որոնք ոչ միայն գինքը կանդամալուծէին այլ եւ ցաւագին ցնցումներ կը պատճառէին իր ամէնափոքր շարժումներուն իսկ: Բայց անոր արեւագուրկ եւ կնճռոտած դէմքը շուտով կը ստանար իր սովորական անդորրութիւնը եւ ստոյիկեան համբերատարութեամբ կը մը տոկար բաղդին իրեն վերապահած ցաւերուն:

Անոր քթանի պէս ճերմկած մագերուն եւ մօրութիւն մէջէն չափազանցօրէն թուխ դէմքը համակրելի էր եւ բարձր զգացումներու դրոշմը կը կրէր. յայտնի էր որ ո եւ է իտէալ յարատեւ կերպով ընդլայնած էր իր հոգին ու գինքը ընդունակ դարձուցած էր վերացումներու: Իր սեւ եւ ծերութենէ նուաղած աչքերը հանդարտ եւ մեղմ լոյս մը ունէին, որոնց մէջ կ'արտավցուլար իր անխարդախ եւ ջինջ մտածումը, շրթունքը միայն, մթնցած եւ գալարուն, իր ֆիզիքական

տանջանքներուն հետքը կը կրէր եւ ձեռքերը ջղուտ, ուռած յօդուածներով կը յայտնէին իր երկարատեւ եւ չարքաշ կեանքը:

Անիկա կը խօսէր կամ կը պատասխանէր երկու սպաներուն՝ խաղաղ հանդիսատրութեամբ մը: Յուզուել էր անոնց իր վիճակին համար ցոյց տուած շահագրգռութենէն, բայց իր զգացումը կը յայտնէր արժանատի պարգոյքեամբ մը, հակառակ որ իր այցելուները իր գերադասեալները ըլլային. ո՛չ մէկ կողմէն ամբարտաւան խրոխտութիւն եւ ո՛չ ալ միւս կողմէն ծառայական խոնարհութիւն կ'արտայայտուէր եւ ասիկա կը դիւրացնէր իրենց տեսակցութիւնը:

Միջոց մը Ատիլ պէյ ծերունի պայտարին հետաքրքրութիւնը կը գոհացնէր՝ զօրանոցի պատմութիւններ ընելով, երբ Ալի Հասան հակառակ իր ջանքերուն, ուշադրութիւնը չէր կրնար կեդրոնացնել խօսակցութեան վրայ, իր մտածումը սուրալով հեռուները՝ կը ցրուէր զանազան ուղիներով: Անսահման յոգնութիւն մը կը ջլատէր գինքը եւ ներքին վայելք մը կը զգար սենեակին զովութեանը մէջ հանգչելով եւ ծերունիին համաչափ եւ պատկառելի ձայնը լսելով. կարծես թէ գինով էր ու չէր գիտեր որ զգացածը ուրախութիւն էր թէ տխրութիւն: Ամէն անգամ որ ջանք կ'ընէր սքափելու, իր վրդովուած յիշողութեան մէջ կը կանգնէր վարդագոյն էնթարիով աղջիկը, արծաթեայ օղակներով զարդարուած եւ որուն հեզնոտ եւ բոցեղ աչքերը կարծես թէ հոգին կը դրդէին ցաւագին եւ հեշտաւէտ զգացումով մը: Մայրամուտէն առաջ մեկնեցան, որովհետեւ Ալի Հասան կը բնակէր Ոսկեղջիւրի հեռաւոր թաղերէն մէկուն մէջ եւ կը շտապէր: Իպրահիմի սենեակին սեմէն հեռանալէ առաջ՝ կը լսէին նալններու համաչափ աղմուկը պարտէզին մէջ եւ պառաւ կնոջ թաւ եւ սրտագրաւ ձայնը որ ատենը մէյ մը կը գոչէր.

Ատիլէ՛... հո՛ւ...

Ոսկի ձայն մը հեռատրութեան մէջ նուաղած, ձայն մը՝ որ դեռ մանկական էր բայց արդէն ստացեր էր երիտասարդուիլի շեշտի ջերմութիւն մը՝ կը պատասխանէր մօրը, ու ասիկա անբացատրելի եւ արբեցուցիչ երաժշտութեան մը պէս քաղցր թուցաւ երիտասարդ սպային:

Անցան պարտեզներէն, առանց մէկու մը հանդիպելու, բայց Ալի Հասանի գրգռուած երեսակայութեանը կ'երեսար ամէն թատուտներու, ամէն կիսաստուերներու մէջ ճերմակ քօղի մը ծածանումը. անթիւ անգամներ խուսափուկ եւ սպիտակ հեւք մը անցաւ իր հնայուած աչքերուն առաջքէն, ինչպէս եթէ աղանիներուն աննիւթական թռիչք մը ըլլար, ու իր խռովուած էութեան մէջ այդ տեսիլքը մաքուր եւ անբիծ գգայնութիւն մը ներշնչեց ու իրեն թուեցաւ նաեւ որ մատղաշ աղջկան հոգին պշրանքով եւ հեզնանքով կը խաղար իր գգացումներուն հետ՝ առանց այդ բանին կարեւորութիւնը գգալու:

Նաւամատոյցը բաժնուեցաւ իր ընկերոջմէն եւ նետուեցաւ վերջին շոգենաւին մէջ. մարդ չկար գրեթէ, եւ մութը կը բարձրանար երկրէն ստուերներու թանձր ծուէններով: Երկինքը թեթեւ ամպերով ծածկուած էր եւ հեռաւոր փարոսներ իրենց լուսեղէն նայուածքը կը քթթէին, երբեմն նուագելով լուսարձակներու արագ եւ ճերմակ ճատագայթներուն մէջ:

Անսահմանելի խաղաղութիւն մը կ'իջնէր բնութեան վրայ. հեռաւոր գիւղանկարներ շուքով պարփակուած, հանդիսաւոր բան մը ունէին: Քաղաքը լուռ էր եւ հանդարտ, ու միայն ուժգնօրէն ակօսուող ջուրերուն շաշիւնը, շոգենաւին մերենաներուն համաչափ հեւքին խառնուելով՝ կը լեցնէր միջոցը:

Ալի Հասան մտազբաղ եւ շփոթ տրամադրութիւններով կը պտտէր կամրջակին վրայ. այդ միջոցին իր միտքը պարապ գգաց. կարծես ո եւ է մտածում, ո եւ է գգայնութիւն չկար իր հոգիին խորը, բայց ահա այդ ներքին լռութեան եւ դադարի մէջէն լսեց խրոխտ եւ անուշ ձայն մը, լսեց ինչ որ անգիտակցութեան մը թուլէին իր հոգին արտասանած էր թերեւս եւ որուն արձագանգը կը վերադառնար իր գօրեղ եւ եռանդուն էութեան մէջ:

Իմ աղանի՛ս, իմ վա՛րդս, իմ սիրակա՛նս... փաղաքշիչ բառեր կը խուժէին իր մտքին մէջ: Անգամ մըն ալ իր հոգին լեցուեցաւ մահուան եւ սիրոյ խորհուրդով:

Ղուրպա՛ն ըլլամ քու հասակիդ որ վարդի թուփի մը կը նմանի, ղուրպա՛ն ըլլամ քու աչքերուդ որոնց լոյսը սիրտս փայփայեց, ղուրպա՛ն այտերուդ որոնց վրայ արծաթէ օղերուն ցոլքը լուսնի լոյսին կը նմանի՛...

Ալի Հասան այն գիշերը անցուց խռովուած վիճակի մէջ. քանի՛ անգամներ արթնցաւ քաղցր եւ մոլորեցնող անըջանքներէ որոնք զինքը կը ցնցէին ու իրեն համար անդիմադրելի բան մը դարձաւ այդ հագիւ թէ ընդնշմարուած աղջկան ցանկութիւնը:

Հետեւեալ առաւօտ Ալի Հասան նախաճաշիկի միջոցին իր մօրը յայտնեց.

Աննէ՛, ես պիտի ամուսնանամ է՛հ... կեանքը անհամ է առանց ընկերուիի, ես պիտի ամուսնանամ եւ շուտով:

Մայրը իր դէմքը խոժոռցուց. ամուսնաթող կին էր եւ մինակը մեծցուցեր էր տղան, դժկամակելով կրկին ամուսնանալու: Ալի Հասան իր մխիթարութիւնը, իր փառքը, իր հարստութիւնը եղած էր: Չէիէր հանրմ գեղեցիկ եղած էր ու տարիներ ետքը իր դէմքը պահած սարայլրի նրբութիւնն ու ազնուապետական վէտութիւնը. իր բարձր ու ճկուն հասակը, իր կամարածեւ յօնքերուն ներքեւէն փայլող սեւ ու գեղեցիկ աչքերը, իր նուրբ քիթը, ու վաղեմի սովորութեամբ մը քառմէնով կարնրած շրթոնքը՝ մոռցնել կուտային թառամած մորթը եւ քունքերուն խորշոնները: Նախկին պալատական, հեռաւոր եւ անձանօթ երկիրներէն բերուած Չերքեզուի, անիկա մէկ օր միայն փառքի գագաթնակէտին վրայ ըլլալէ ետք, անկողինէ անկողին հասեր էր շատ անփառունակ եւ համեստ ամուսնութեան մը: Բայց Չէիէր հանրմ համակրեր էր Ալի Հասանի հօրը ու առաջին անգամ զգացեր էր սիրոյ սարսուռը. առաջին անգամն ըլլալով նաեւ իր կնոջական կողերը բացուեր էին մայրութեան համար:

Իրեն համար, իր կնոջ արժանատրութեան եւ զգացումներու կեանքը կը սկսէր այդ օրէն. բաղդաւոր եւ երջանիկ եղած էր. բայց կարճատեւ ժամանակի մէջ: Իր ամուսինը հարճի մը հետ կրկին ամուսնացած ըլլալով, յանկարծ նախկին պալատական գերուիին զգացեր էր որ այդ կացութիւնը անհանդուրժելի է իրեն եւ խնդրեր էր իր սիրած ամուսինէն ու արձակէ զինքը: Այդպէս ալ եղեր էր ու Չէիէր հանրմ առանձնացեր էր այլեւս իր տղուն հետ որ աստիճան մը անտարբերութեամբ, քիչ մըն ալ իբր փոխարինութիւն, ամուսինը իր քով թողեր էր ետ առնելու պայմանով այն օրը որ կրկին ամուսնանար. ու Ալի Հասանի մայրը չէր ամուսնացած:

Շատ բան տեսած ու շատ բան կրած կնոջ փորձառութեամբ ու նաեւ բնական խելքով՝ ազատ թողեր էր տղան եւ միջոցներ գտեր էր զայն իրեն պահելու եւ ուրիշ կնոջ մը մուտքը արգիլելու համար տան մէջ: Բայց իր այդ դիտաւորութիւնները գաղտնի մնացած էին. ընդհակառակը իր տղուն կը խօսէր երբեմն ամուսնութեան վրայ:

Կէօրիւճի կիներ յաճախ կ'այցելէին իրենց եւ հարէմներու խորհուրդին մէջ ծածկուած գեղեցկուհիներու նկարագրութիւնը կ'ընէին մօրը եւ զակին, անհրական հէքեաթի մը պէս կը լսէր Ալի Հասան ասոնք նկարագրուած կիներուն մէջ ամէն ճաշակի ու ամէն ախորժակներու համար կային:

Հակիթէն նոր ելած վառեակի պէս միամիտ եւ փափուկ է. աչքերը որ ըսե՛ս, հեշտութեան ծով մըն է, կարծես մթին գիշեր մըն է որուն մէջ կայծակ մը կը փայլատակէ, կարծես երկնքի հրաշալիքներուն վրայ բացուած պատուհան մըն է, ո՛վ պէյս, իր ճկուն իրանը հովերէ տարուբեր բաղեղի ոստի մը կը նմանի եւ անհկա վայել է քու նոճիի հասակիդ...

Ու նկարագրութիւնը կը շարունակուէր ուրիշի մը վրայ:

Անոր խօսուածքը, վերջալոյսի պահուն յոգնած եւ պապական ճամբորդի մը ականջին հեռուէն հասած աղբիւրի մը կարկաչիւնին կը նմանի անոր մշքահոտ եւ մատղաշ մարմինը, ձիւնափառ լանջքը, ծառերուն շուքին մէջ աճած ծաղիկի մը թերթերուն փափկութիւնը ունին. իսկ բերանը որ ըսե՛ս, նոր բացուած նռան ծաղկի կը նմանի, ցողագարդ վարդի կոկոնի մը պէս է որ համբոյրի կը սպասէ բացուելու համար. անոր ծովի պէս մազերը անասող գիշերի մը նման սեւ են, նայուածքը երագ մըն է. ու անունը շրթներու վրայ քաղցր է մեղրի պէս...

Ալի Հասան ու մայրը վանդակապատ պատուհաններուն ետեւ, կապերտներով ծածկուած ցած բազմոցներու վրայ ծալլապատիկ նստած մտիկ կ'ընէին ու բարեացակամութեամբ կը ժպտէին, երկուքն ալ մղուած տարբեր տարբեր զգացումներէ, մինչ իրենց բուրումնաւէտ ծխախոտէ մշուշապատ միջոցին մէջէն գեղեցկութիւններու պատկերներ իրարու կը յաջորդէին եւ կ'անհետանային իսկոյն:

Այլ սակայն այս իտեալ կիներու տեսիլքը ոչ մէկ խորունկ ազդեցութիւն կ'ընէր Ալի Հասանի վրայ, որուն երեսակայութիւնը խաղաղ էր եւ որուն ճաշակները դրական էին: Միւս կողմէ, իր ազատ կեանքը գինքը գերծ կը պահէր այդ կարգի հրապուրանքներէ եւ ամուսնութեան անհրաժեշտութիւնը չէր ներկայացներ:

Երբեմն ալ ճարպիկ միջնորդ կիներ ուզելով զգուել իր գինուորականի ախորժակները՝ տարբեր պատկեր կը ներկայացնէին:

Տորենի հասակի մը պէս խարտեաշ է ու աչքերը կապոյտ են մայիսի երկնքի պէս, նորածագ արշալոյսի նման լոյս եւ շնորհ կը ճառագայթէ իր անձէն: Անիկա բուրումնաւէտ է շուշանի բաժակի մը պէս... Պէ՛յս... քեզի որուն այնքա՛ն կը վայլէ սուրը եւ հրացանը, կը վայլէ նաեւ այս աղջիկը որ կարծես անհաւատներէն յափշտակուած գանձ մըն է:

Ալի Հասան բոլոր այս խոստումներուն փոխարէն կը ժպտէր, կը կատակէր եւ ի վերջոյ քաղաքավարութեամբ կը ճամբէր յուսախաբ միջնորդները:

Բայց այս անգամ խնդիրը տարբեր էր: Ծերուկ Իպրահիմի նորահաս աղջիկը ոչ մէկ կերպով համապատասխան չէր այդ հուրիներուն, բայց անիկա իր զգացումները վրդովեր էր ուժգնօրէն եւ ուզածը անմիջապէս ունեցող մարդու քմահաճոյքով՝ կը դժգոհէր որ ինքը չկրցաւ անմիջապէս մօտենալ վարդագոյն էնթարիով աղջկան. ինչպէս պիտի մօտիկնար եւ քաղէր ճամբուն վրայ ծաղկած ծաղիկ մը: Մտքէն իսկ չանցուց նաեւ մտածել թէ անիկա գինք հաճելի կը գտնա՞ր թէ ոչ, ինքը գայն ընտրած էր իբր կին, սիրած էր անոր ճկուն մարմինը, սիրած էր անոր ճերմակ քօղին տակ ծածկուած ճակատը, հեզնող ու կայծկլտուն աչքերը, արծաթէ օղերը թխորակ եւ տժգոյն այտերուն վրայ՝ որոնք վայրկենապէս գունաւորուեր էին վարդագոյն ալիքով մը, իրենց ներկայութեան, ու անոր փախուստն անգամ պարտէզին ածունեթուն մէջէն, իր փափաքը կը գրգռէր ու կ'ուզէր գայն ձեռք անցունել երկշոտ եւ սիրուն թռչունի մը պէս:

Ալի Հասան նախաճաշիկը վերջացնելով մօրը անհանգիստ նայուածքին ներքեւ, կը մտածէր արագօրէն բոլոր այս բաներուն: Ու անգամ մըն ալ եզրակացուց:

Աննէ՛, ես որոշած եմ ամուսնանալ: